ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10

ՀՀ Լոռու մարզպետի մոտ կայացած ընդլայնված խորհրդակցության

14.12.2021թ. **ք.Վանաձոր**

Մասնակցում էին

Գ.Ասրյանը- մարզպետի տեղակալ
Կ.Աշրաֆյանը - մարզպետարանի գլխավոր քարտուղար
Ն.Ասրյանը, Ռ.Պողոսյանը, Ա.Գրիգորյանը, Դ.Մանուչարյանը, Մ.Խեչումյանը, Ա.Թումանյանը, Ա.Ադլոյանը, Է.Հախվերդյանը, Ա.Հակոբյանը, Ա.Սահակյանը, Հ.Մկրտչյանը, Ի.Մարտիրոսյանը, Ա.Նահապետյանը
Տ.Հովսեփյանը - մարզպետի օգնական
Է.Կոստանյանը -մարզպետի օգնական

Օ ր ա կ ա ր գ ո ւ մ՝

1. Մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարների կողմից նախորդ խորհրդակցությունից հետո կատարված և առաջիկայում կատարվելիք աշխատանքների վերաբերյալ

(զեկ. մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներ)

2. Այլ հարցեր

Հ ա ն ձ ն ա ր ա ր վ ե ց

1. ՀՀ Լոռու մարզպետարանի ստորաբաժանումների ղեկավարներին՝

ա/ Անհրաժեշտ հնարավոր միջոցներ ձեռնարկել ըստ ոլորտների մարզում ներդրումային և այլ ծրագրերի իրականացմանն աջակցելու ուղղությամբ և անհրաժեշտության դեպքում ներկայացնել առաջարկություններ:

բ/ ՈՒսումնասիրել ՀՀ Կառավարության 1902-Լ որոշմամբ սահմանված միջոցառումների ծրագրերը ըստ ոլորտների և ներկայացնել տեղեկատվություն ու առաջարկություններ:

2. **Լոռու մարզպետարանի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Մ.Խեչումյանին, մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Մ.Դալլաքյանին՝**

ա/ Անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել Լոռու մարզի առկա ազգաբնակչության թվաքանակի ճշգրտման ուղղությամբ.

բ/ Միջոցներ ձեռնարկել համայնքների կողմից սեփական եկամուտների հավաքագրման տարեկան պլանային ցուցանիշները ապահովելու ուղղությամբ և 5-օրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:

12/14/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ՝ **Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ**

Արձ. Ս.Մակարյան